Կազմված է «15»սեպտեմբերի 2025 թ.
Բաղկացած է 6 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՖՐԻ ՍԹԱՅԼ»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության միակ մասնակցի «15» սեպտեմբերի
2025թ. թիվ 01 որոշմամբ

տնօրեն՝ Արման Հարությունյան
«15» սեպտեմբերի 2025 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «02»05. 2007 թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 290.110.03490
ՀՎՀՀ՝ 01841103
«27»09.2021 թ. ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ 5 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է 04/2
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ
«17»09 2025 թ.

աշխատակից՝ _____

«ՖՐԻ ՍԹԱՅԼ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Ք. Երևան - 2025 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՖՐԻ ՍԹԱՅԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ « ՖՐԻ ՍԹԱՅԼ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կրճատ՝ «ՖՐԻ ՍԹԱՅԼ» ՍՊԸ

ռուսերեն լրիվ՝ «ФРИ СТАИЛ» Общество с Ограничеенной Ответственностью

կրճատ՝ « ФРИ СТАИЛ » ООО

անգլերեն լրիվ՝ «FREE STYLE» LIMITED LIABILITY COMPANY

կրճատ՝ « FREE STYLE » LLC

1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՄԱՐԳԱՅԱՆ ՆՐԲ./Շ/1//104, ԱՋԱՓՆՅԱԿ, 0036, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա որպես այդպիսին գրանցվելու պահից:

2.2. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

2.2.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն: Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

2.2.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել

բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

2.2.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

2.3. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է ընկերությանը:

2.4. Ընկերության մասնակիցները կարող են տեղեկություններ ստանալ, ընկերության գործունեության մասին գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ:

2.5. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

– Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 4 550 000 (չորս միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 1 (մեկ) բաժնեմասի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 4 550 000 (չորս միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են սույն կանոնադրության հավելվածում նշված մասնակցին (մասնակիցներին):

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Տնօրենների խորհուրդը և Գլխավոր տնօրենը:

4.2 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

4.3 Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է ընկերության գլխավոր տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան չորս ամիս անց: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

4.4 Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններն են՝

ա) ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը.

բ) ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.

գ) ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) տալու հարցերը.
դ) վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը.
ե) տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.
զ) ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը.
է) ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը).
ը) ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.
թ) ընկերության արտաքին աուդիտի իրականացման որոշումն ընդունելը.
ժ) ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը.
ժա) լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.
ժբ) սույն օրենքով և (կամ) ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
4.5 Տնօրենների խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված հարցերի սահմաններում:
4.5 Տնօրենների խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝
ա) Ընկերության զարգացման ռազմավարության որոշումը,
բ) Ընկերությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը
գ) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների գումարումը, այդ ժողովների օրակարգի հաստատումը և դրանց նախապատրաստմանն ու գումարմանն առնչվող այլ հարցերի լուծումը,
դ) Ընդհանուր ժողովի հաստատմանը Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը և վճարման չափի սահմանումը.
ե) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
զ) Ընկերության բաժնեմասերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
է) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության, հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,
4.6 Տնօրենների խորհուրդը բաղկացած է Տնօրենների խորհրդի նախագահից և ևս երկու անդամից, ովքեր ընտրվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ: Տնօրենների խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից և կարող է լինել առանց ժամկետային սահմանափակման: Տնօրենների խորհրդի նախագահն ու անդամներն ունեն վերընտրվելու իրավունք:

4.7 Տնօրենների խորհրդի նախագահը ընտրվում է Տնօրենների խորհրդի անդամների կազմից և վերջիններիս կողմից՝ անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

4.8 Տնօրենների խորհրդի նախագահը՝

ա կազմակերպում է Տնօրենների խորհրդի աշխատանքները,

բ գումարում է Տնօրենների խորհրդի նիստերը, նախագահում է դրանք և կազմակերպում է դրանց արձանագրությունների վարումը,

գ նախագահում է ընդհանուր ժողովում,

4.9 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության Գլխավոր տնօրենը, ով՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

7) կազմակերպում է Ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի որոշումների կատարումը,

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատակիցներին.

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

11) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ կամ Ընկերության կանոնադրությամբ՝ Ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի իրավասությանը չվերապահված այլ իրավունքներ:

«ՖՐԻ ՍԹԱՅԼ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը (պետությունը որտեղ հիմնադրվել է, անվանումը) անձնագրի (գրանցման) տվյալները հասցեն (գտնվելու վայրը)	բաժնե-մասերի քանակը	բաժնեմասի չափը %
Պետությունը, որտեղ հիմնադրվել է՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** Անվանումը՝ **«ՖՐԻ ՍԹԱՅԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ** Գրանցման համարը՝ **271.110.1192957** Գրանցման ամսաթիվը՝ **26.08.2021 թ.** Գտնվելու վայրը/իրավաբանական հասցե/՝ **ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 36/2, ԱԶԱՓՆՅԱԿ, 0036, ԵՐԵՎԱՆ**	1	100